

Հ Ա Մ Ա Չ Ա Յ Ն Ա Ք Ի Ր

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ուրուգվայի Արևելյան Հանրապետության կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձաբար պաշտպանության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, մի կողմից, և Ուրուգվայի Արևելյան Հանրապետության կառավարությունը, մյուս կողմից, (այսուհետ՝ Պայմանագրվող կողմեր),

նպատակ ունենալով ամրապնդել տնտեսական համագործակցությունը՝ ստեղծել օգտակար պայմաններ Պայմանավորվող կողմերից մեկի քաղաքացիների կողմից մյուս Պայմանավորվող կողմի տարածքում ներդրումների իրականացման համար,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1 Սահմանումներ

Սույն Համաձայնագրում օգտագործվող տերմիններն ունեն հետևյալ նշանակությունը.

1. «Ներդրումներ» տերմինը նշանակում է գույքի բոլոր տեսակները, որոնք տնտեսական գործունեության իրականացման նպատակով ներդրվում կամ վերաներդրվում են Պայմանավորվող կողմերի տարածքներում՝ նրանցից յուրաքանչյուրի ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով ու պայմաններով, և ներառում են, մասնավորապես, բայց ոչ բացառապես.

ա) շարժական և անշարժ գույքը, ցանկացած այլ գույքային իրավունքները, ինչպես, օրինակ, վարձակալության, գրավի, հիպոթեքի կամ գրավադրման իրավունքները, բ) իրավաբանական անձանց կամ այլ ձեռնարկությունների բաժնետասերը, բաժնետոմսերը և պարտավորությունները կամ նման ձեռնարկություններում մասնակցության այլ ձևերը,

գ) դրամական պահանջները և պայմանագրից բխող պարտավորությունները,

դ) մտավոր սեփականության իրավունքը և նույն հատված,

ե) օրենքով կամ պայմանագրով տրամադրված կոնցեսիաները, ներառյալ բնական պաշարների հետախուզման, արդյունահանման, մշակման կամ շահագործման կոնցեսիաները:

Կապիտալի ներդրման կամ վերաներդրման իրավական ձևերի փոփոխությունը սույն Համաձայնագրի շրջանակներում չի ազդի դրանց դիտարկմանը որպես «ներդրումների»:

2. «Ներդրող» տերմինը նշանակում է.

ա) ցանկացած ֆիզիկական անձ, որը, համաձայն յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի օրենսդրության, հանդիսանում է նրա քաղաքացի,

բ) ցանկացած իրավաբանական անձ կամ այլ միավոր, որը ստեղծվել կամ հիմնվել

է Պայմանավորվող կողմերից մեկի օրենսդրության համապատասխան, ունի գտնվելու վայր Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում և ճանաչված է վերջինիս օրենսդրությամբ,

գ) այնուամենայնիվ, սույն Համաձայնագիրը չի կիրառվում երկու Պայմանավորվող կողմերի քաղաքացիներ հանդիսացող ֆիզիկական անձանց կողմից կատարված ներդրումների նկատմամբ, եթե ներդրման պահին, այդպիսի անձանց իրավաբանական հասցեն գտնվում է այն Կողմի տարածքից դուրս, որտեղ իրականացվել է ներդրումը:

3. «Եկամուտներ» տերմինը նշանակում է ներդրումներից ստացված գումարները և ներառում է, մասնավորապես, սակայն ոչ բացառապես, շահույթը, տոկոսավճարները, կապիտալի աճը, շահաբաժինը, ժոյալթիները և կոմիսիոն վճարները:

4. «Տարածք» տերմինը նշանակում է՝

ա) կապված Հայաստանի Հանրապետության հետ՝ Հայաստանի Հանրապետության տարածքը,

բ) կապված Ուրուգվայի Արևելյան Հանրապետության հետ՝ Ուրուգվայի Արևելյան Հանրապետության տարածքը, ներքին ջրերը և տարածքային ծովը, ինչպես նաև տարածքային ծովի սահմաններից դուրս ջրային այն տարածքները, որոնց նկատմամբ Ուրուգվայը իրականացնում է իր ինքնիշխան իրավունքները և իրավասությունը՝ համաձայն իր գործող օրենքների և միջազգային իրավունքի:

Հոդված 2

Ներդրումների խրախուսում և պաշտպանություն

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է խրախուսի և օժանդակի իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումները և պետք է ընդունի այդ ներդրումները՝ համաձայն իր օրենքների և կանոնների:

Հոդված 3

Ազգային ռեժիմ և առավել բարենպաստության ռեժիմ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների նկատմամբ պետք է ապահովի արդար և հավասար պայմաններ և բացառի որևէ անհիմն կամ խտրական միջոցառում՝ կապված ներդրումների կատարման, ընդլայնման, գործառման, կառավարման, օգտագործման, օտարման կամ տնօրինման այլ ձևերի հետ:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների և նրանց ներդրումների նկատմամբ կտրամադրի այնպիսի պայմաններ, որոնք կլինեն ոչ պակաս բարենպաստ, քան այն պայմաններն են, որոնք կիրառում են սեփական կամ ցանկացած երրորդ պետության ներդրողների և նրանց ներդրումների նկատմամբ, և որը նշված պայմաններից առավել բարենպաստ է:

3. Այնուամենայնիվ, այդ պայմանները չեն վերաբերում այն արտոնություններին, որոնք մի Պայմանավորվող կողմը տրամադրում է երրորդ պետության ներդրողներին՝ մաքսային, ազատ առևտրի գոտի, տնտեսական միություն կամ այլ տարածաշրջանային տնտեսական կազմակերպություններ հիմնող համաձայնագրերի համաձայն, ինչպես նաև հարկային համաձայնագրերի հիման վրա:

Հոդված 4

Ներդրումների օտարումը և դրանց դիմաց փոխհատուցումը

1. Մի Պայմանավորվող կողմի ներդրումները ենթակա չեն օտարման, ազգայնացման, սեփականագրկման կամ ազգայնացմանը կամ սեփականագրկմանը նմանատիպ մեթոդներ ունեցող այլ միջոցառումների (այսուհետ՝ օտարում) մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, բացառությամբ այն դեպքերի, երբ օտարումը բխում է հասարակության կարիքներից: Օտարումը և փոխհատուցումը իրականացվում են օրենքի հիման վրա, առանց խտրականության և համաձայն օտարումն իրականացնող երկրի օրենսդրության: Այսպիսի փոխհատուցումը պետք է համարժեք լինի օտարված ներդրման իրական շուկայական արժեքին՝ օտարման մասին որոշման կայացման պահից անմիջապես առաջ: Վերը նշված փոխհատուցման գումարները պետք է լինեն ազատ փոխանցելի և վճարման ենթակա ազատ փոխարկելի արժույթով:

2. Պայմանավորվող կողմի ներդրողների նկատմամբ, որոնք վնասներ են կրում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում պատերազմի, զինված ընդհարման, ապստամբության, արտակարգ իրավիճակների, խռովության կամ հասարակական կարգի խախտման հետևանքով, կապված վնասների վերականգնման, փոխհատուցման կամ այլ կարգավորման հետ, վերջին Պայմանավորվող կողմի կողմից կկիրառվեն այնպիսի մեթոդներ, որոնք կլինեն ոչ պակաս բարենպաստ, քան այն պայմաններն են, որոնք վերջին Պայմանավորվող կողմը կիրառում է սեփական կամ որևէ երրորդ պետության ներդրողների նկատմամբ:

Հոդված 5

Փոխանցումներ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կերաշխավորի իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների հետ կապված վճարումների ազատ փոխանցումը հարկային պարտավորությունների կատարումից հետո, ներառյալ՝

- ա) ներդրումների իրականացման, պահպանման և ընդլայնման համար անհրաժեշտ գումարները,
- բ) ներդրումներից ստացված եկամուտները,
- գ) պայմանագրերից բխող վճարումների իրականացման համար անհրաժեշտ գումարները, ներառյալ փոխառությունների, ռոյալթիների հետ կապված վճարումները և պարտավորություններից, ֆրանչայզներից և այլ նմանատիպ իրավունքներից բխող վճարումները, ինչպես նաև արտասահմանյան աշխատուժի աշխատավարձերի գումարները,
- դ) ներդրումների ամբողջական կամ մասնակի օտարումից ստացվող միջոցները, ներառյալ ներդրված կապիտալի աճը,
- ե) սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածով նախատեսված փոխհատուցման գումարները,
- զ) վիճերի լուծման արդյունքում ստացված վճարումները:

2. Փոխանցումները պետք է իրականացվեն առանց անհիմն ուշացումների, ազատ փոխարկելի արժույթով, փոխանցման իրականացման օրվա փոխարժեքով:

Հոդված 6 Սուբրոգացիա

1. Եթե մի Պայմանավորվող կողմը կամ իր լիազոր գործակալությունը փոխհատուցում է վճարում սեփական ներդրողին մյուս Պայմանավորվող կողմի տարածքում կատարած ներդրումների կապակցությամբ ոչ առևտրային ռիսկի երաշխավորման դիմաց, ապա մյուս Պայմանավորվող կողմը կճանաչի ներդրողի կողմից առաջին Պայմանավորվող կողմին կամ նրա լիազոր գործակալությանը ցանկացած իրավունքի կամ պահանջի փոխանցումը:

2. Ինչ վերաբերում է փոխանցվող իրավունքներին, ապա մյուս Պայմանավորվող կողմը իրավասու է պահանջել ապահովագրողից, որը փոխհատուցել է ներդրողի կրած վնասները, ստանձնել օրենքից կամ պայմանագրերից բխող՝ ներդրողի պարտավորությունները:

3. Սուբրոգացված իրավունքները և պահանջները չպետք է գերազանցեն ներդրողների սկզբնական իրավունքները կամ պահանջները:

Հոդված 7

Սի Պայմանավորվող կողմի և մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի միջև ներդրումային վեճերի կարգավորումը

1. Ներդրման հետ կապված ցանկացած վեճի մասին, որը կծագի մի Պայմանավորվող կողմի ներդրողի և մյուս Պայմանավորվող կողմի միջև, գործողություններ նախաձեռնող կողմը պետք է գրավոր տեղեկացնի մյուս կողմին: Ծանուցումը կուղեկցվի պատշաճ մանրամասնությամբ ներկայացված հուշագրով:

2. Վիճող կողմերի միջև հուշագրի ներկայացումից հետո 6 ամսվա ընթացքում բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով վեճի կարգավորման անհնարինության դեպքում վեճը, ներդրողի հայեցողությամբ, ներկայացվում է կամ ներդրման երկրի իրավասու դատավարության կամ էլ միջազգային միջնորդ դատարանի քննությանը: Եթե ներդրողը վեճը ներկայացրել է վերոհիշյալ ազգային դատավարության կամ միջազգային միջնորդ դատավարության քննությանը, ապա այդ ընթացակարգերից մեկի կամ մյուսի ընտրությունը պետք է վերջնական լինի, եթե վեճին մասնակից կողմերը այլ համաձայնության չեն եկել:

Վերջինիս դեպքում Պայմանավորվող կողմերը նախապես համաձայնում են սույն հոդվածի 1-ին պարբերությամբ նշված վեճը անվերապահորեն ներկայացնել միջազգային արբիտրաժին՝ սույն հոդվածի դրույթների համաձայն: Այսպիսի համաձայնությունը ենթադրում է, որ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ հրաժարվում է պահանջել, որ սպառված լինեն վեճի կարգավորման համար առկա բոլոր տեղական վարչական կամ դատական միջոցները:

3. Միջազգային արբիտրաժային դատավարության դեպքում, ներդրողի հայեցողությամբ, վեճը ներկայացվում է ներքոհիշյալ կազմակերպություններից որևէ մեկին.

- Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոն (ICSID)՝ Պետությունների և այլ պետությունների քաղաքացիների միջև ներդրումային վեճերի կարգավորման կոնվենցիայի հիման վրա կամ վերջինիս քարտուղարության կողմից ղեկավարվող Վարույթների լրացուցիչ հաստատությունների կանոնների համաձայն,

- ad hoc արբիտրաժային դատարան, որը ստեղծվել է ՄԱԿ-ի Միջազգային արբիտրաժային իրավունքի հանձնաժողովի կողմից հաստատված Արբիտրաժային կանոնների համաձայն:

4. Վեճին մասնակցող Պայմանավորվող կողմերը պարտավորվում են արբիտրաժային գործընթացի կամ արբիտրաժային որոշման իրականացման ցանկացած փուլում ցուցաբերել այն հանգամանքը, որ մյուս Կողմի ներդրողը, սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածում նշված որևէ ապահովագրական քաղաքականության կամ տրամադրած երաշխիքների համաձայն, ստացել է վնասների լիովին կամ մասնակի փոխհատուցում:

5. Միջնորդ դատարանը վճիռ է կայացնում՝ առաջնորդվելով ներդրում ընդունող Պայմանավորվող կողմի ազգային օրենքներով, ներառյալ կոլիզիոն իրավունքի նորմերը, ինչպես նաև սույն Համաձայնագրի դրույթներով, ներդրումների հետ կապված՝ գոյություն ունեցող հատուկ համաձայնագրերով և միջազգային իրավունքի սկզբունքներով:

6. Միջնորդ դատարանի վճիռը վերջնական և պարտադիր է վեճի մասնակից կողմերի համար: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պարտավորվում է իրականացնել վճիռն իր ազգային օրենսդրությանը համապատասխան:

7. Կողմերից ոչ մեկը չի նախաձեռնի միջազգային հայց կապված սույն հոդվածի ընթացակարգերի համաձայն ներկայացված վեճի հետ, քանի դեռ մյուս Կողմը հրաժարվում է կատարել կամ չի ենթարկվում միջնորդ դատարանի վճիռն, կամ վերջին Կողմի դատական մարմինները խախտում են միջազգային իրավունքի կանոնները, ներառյալ արդարադատությունից և սույն Համաձայնագրի դրույթներից հրաժարումը:

Հոդված 8

Պայմանավորվող կողմերի միջև սույն Համաձայնագրի մեկնաբանմանը կամ կիրառմանը վերաբերող տարաձայնությունների կարգավորումը

1. Պայմանավորվող կողմերը սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերը հնարավորության սահմաններում կլուծեն բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

2. Բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով երեք ամսվա ընթացքում կարգավորման անհնարինության դեպքում տարաձայնության առարկան պետք է ներկայացվի սույն հոդվածի համաձայն ստեղծված դատարանին:

3. Յուրաքանչյուր մասնավոր դեպքի համար միջնորդ դատարանը կստեղծվի հետևյալ կերպ: Վեճի կարգավորման համար պահանջագրի ստացումից հետո երեք ամսվա ընթացքում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է նշանակի դատարանի մեկ անդամ: Այս երկու անդամները փոխհամաձայնությամբ ընտրում են երրորդ երկրի քաղաքացի, որը, երկու Պայմանավորվող կողմերի համաձայնությամբ, կնշանակվի դատարանի նախագահ (այսուհետ՝ Նախագահ): Նախագահը պետք է նշանակվի 40 օրվա ընթացքում՝ սկսած միջնորդ դատարանի երկու անդամներից վերջինի նշանակման պահից:

4. Եթե սույն հոդվածի երրորդ կետում նշված ժամանակահատվածում անհրաժեշտ նշանակումները չեն կատարվում, Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է լինել ՄԱԿ-ի Միջազգային դատարանի նախագահին՝ կատարել նշանակում(ներ): Եթե ՄԱԿ-ի Միջազգային դատարանի նախագահը հանդիսանում է Պայմանավորվող

Հոդված 11

Փոփոխություններ և լրացումներ

Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ՝ դրա համար Պայմանավորվող կողմերի՝ անհրաժեշտ սահմանադրական և իրավական պահանջներին համապատասխան: Փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են առանձին արձանագրություններով և հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը: Փոփոխությունները և լրացումներն ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 12-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 12

Համաձայնագրի ուժի մեջ մտնելը, տևողությունը և դադարեցումը

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից վավերագրերի փոխանակումից մեկ ամիս հետո: Սույն Համաձայնագիրը գործում է տասը տարի ժամկետով:
 2. Եթե Համաձայնագրի գործողության ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ Պայմանավորվող կողմերից որևէ մեկը չներկայացնի գրավոր ծանուցում այն դադարեցնելու պահանջով, ապա Համաձայնագրի գործողության ժամկետը ամեն անգամ ինքնաբերաբար կերկարաձգվի ևս 10 տարով: Տվյալ դեպքում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ այդ պահին Համաձայնագրի ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ դիվանագիտական ուղիներով ծանուցելով մյուս Կողմին:
 3. Այն ներդրումների նկատմամբ, որոնք կատարվել են մինչև սույն Համաձայնագրի գործողության դադարեցման ժամկետը, սույն Համաձայնագրի 1-12 հոդվածի պայմանները կգործեն դադարեցման ժամկետից հետո հաջորդ 10 տարիների ընթացքում:
- Ի վկայություն վերը նշվածի՝ համապատասխան կառավարությունների լիազոր ներկայացուցիչները ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Մոնտեվիդեո քաղաքում 2002 թվականի մայիսի 6-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը հայերեն, իսպաներեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ ծագած տարաձայնությունների դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին: